

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼՈՆՏՐԱՅԻ

Հ Ի Մ Ն Ե Ա Լ 1898, Վ Ե Ր Ա Կ Ա Ջ Մ Ե Ա Լ 1918

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

Գ. Մ. Գրիգոր, Տեղակալ- գնդապետ, Ատենապետ.

Ճ. Ճ. Յովակիմ,
Ա. Փ. Յակոբեան,
Մ. Գ. Կիւտնեան,
Ս. Փ. Սղիվընս.

Դեր-Ատենապետ
Կեր-Ատենապետ և
Պատ. Գանձապետ
Վ. Բժիշկ Պատ. Ատենապետ

Տրքթ. Արսլանեան.
Յ. Ն. Մոստիցեան.
Ն. Փ. Յակոբեան, օգն. Գանձ.
Ճէյմզ Ա. Մէլքոյմ.

Բնկերութիւնս հիմնուած է կրկին նպատակներու համար. ա. ի մի հաւաքել բրիտանական մայրաքաղաքին մէջ գտնուող բոլոր հայերն ու զանոնք հաղորդակցութեան մէջ դնել բրիտանական հասարակութեան հետ, այս կերպով աւելի ջերմ համակրութիւն մը յառաջ բերելու համար երկու Ազգերուն մէջ. և բ. Քաղաքակիրթ աշխարհի վառարանին մէջ կեդրոնացնել թէ՛ ընկերական և թէ՛ ազգային շատ մը հարցեր՝ որոնք վերաբերութիւն ունին Հայաստանի և Հայոց հետ:

Բնկերութիւնս, վերոյիշեալ դիտումներն աչքի առնելու ունենալով՝ իր ջանքերուն նպատակ ըրած է.

ա). Լոնտրայի մէջ հաստատել մնայուն բնակարան մը, որ պիտի ունենայ ժողովարան մը, ընթերցարան և գրատուն.

բ). Սարքել ընկերական և գրական հասօրոյթներ.

գ). Նպաստել և դաստիարակել հայ որբեր, որոնք յետին խեղճութեան և չքաւորութեան ենթարկուած են՝ Հայաստանի դարաւոր յոռի վարսութեան հետեւանքով.

դ). Հայաստանի վերաբերեալ քաղաքական գործոց ուղղութեան վրայ հսկել, և խաղաղական միջոցներով կարելի եղածն ընել երկրին ու ժողովրդեան բարւոքման համար՝ մնայուն Մասնաժողովի մը և գրական հրատարակութեան ձեռքով.

ե). Տակաւ պատրաստել ֆոնտ մը՝ Լոն-

տրայի մէջ Հայկական Եկեղեցւոյ մը հիմնարկութեան համար:

Անդամակցութիւն բացուած է երկսեռ հայերու համար:

Հանգանակութիւն.-Տարեկան՝ 10 շիլին. Մուտքի տուրք՝ 5 շիլին.- Մշտնջենաւոր անդամներ՝ 5 սիլիլին:

Օտար Ազգերէ համակիր և բարեացակամ անձինք կրնան արժանապէս ընտրուիլ իբր Պատ. Անդամներ, որոնք սակայն վարչական ձայն չունին և հանգանակութիւն չեն վճարեր:

Աւելորդ է ըսելը թէ վերոյիշեալ անուանական հանգանակութիւնը հազիւ բաւական կ'ըլլայ Բնկերութեանս սովորական գործառնութեանց ծախքերը գոցելու համար: Կարևորագոյն գործառնութեան յաջողութիւնը կը կարօտի համակիր անձանց առատաձեռնութեան. և անոնցմէ որոնք կարող են նպաստել թախանձանք կը խնդրուին նուիրատուութիւններ վերոյիշեալ ազգային նպատակներն ի գլուխ հանելու համար. ընկերութիւնը, իր վերակազմութենէն ի վեր, հասարակութենէն քաջալիւրթիւն գտած է. սակայն շատ աւելին հարկաւոր է սոյն ընկերութիւնը հաստատուն հիման վրայ դնելու համար, որպէս զի վերոյիշեալ գործն յաջողութեամբ յառաջ տարուի:

Անդամակցութեան առաջարկութիւններ, ինչպէս նաև ընկերութեանս ո՛ր և է նպատակին վերաբերեալ թղթակցութիւնք, պարտին ուղղուիլ առ.

The Hon. Secretary

47 A, Redcliffe Square

LONDON, S. W.